



Օրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից



ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Ուսումնասիրության զեկույց

Արմավիր 2019

Բովանդակություն

Ներածություն-----	3
Մշտադիտարկման մեթոդաբանություն-----	4
Հայաստանում ներառական կրթության ներդրման ելակետային խնդիրները-----	4
Դպրոցների ֆիզիկական ենթակառուցվածքներ, տրասնպորտ, սնունդ-----	5
Վերապատրաստումներ-----	5
Անհատական ուսումնական պլանի՝ ԱՌՊ գործադրումը-----	8
Երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը-----	9
Ուսումնական ծրագրերը, դասապրոցեսը և երեխաների առաջադիմության գնահատումը-----	11
ԿԱՊԿՈւ երեխաների մասին տվյալների կառավարումը-----	13
Եզրակացություններ-----	14
Առաջարկություններ-----	16
Հավելվածներ -----	18

Հայաստանում ընթանում է համընդհանուր ներառական դպրոցական կրթության անցման գործընթացը: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Տավուշի, Լոռու, Սյունիքի և Արմավիրի մարզերն արդեն անցում են կատարել համընդհանուր ներառական դպրոցական կրթության: 2019 թվականին համընդհանուր ներառական դպրոցական կրթության կանցնի նաև Երևանը: Ըստ ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրի նախատեսվում է «անցնել համընդհանուր ներառական հանրակրթությանը հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում մինչև 2023 թվականը»¹:

Համընդհանուր ներառական դպրոցական կրթության անցման հռչակված քաղաքականությունը բավականին հավակնոտ է Հայաստանի համար, քանզի այն ենթադրում է ոչ միայն հատուկ դպրոցներում սովորող երեխաների ուսման կազմակերպում հանրակրթական դպրոցներում, այլև դպրոցական կրթության օպերացիոն համակարգի համընդհանուր փոփոխություն: Համընդհանուր ներառական կրթական համակարգը ենթադրում է կրթության էկոլոգիայի և աշխատատեղի արմատական փոփոխություն: Պարզապես մեխանիկական փոփոխությունները, հաստիքացուցակի ավելացումները կամ կրճատումները, ֆինանսական հոսքերը, չեն կարող ապահովել ներառական կրթության արդյունավետ իրականացումը: Անհրաժեշտ են մտածելակերպի և գործելակերպի փոփոխություններ:

Ներառական կրթությունը կարևոր դեր ունի կրթության համաշխարհային օրակարգում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2020 թվականի Գլոբալ մոնիտորինգային զեկույցը նվիրված է լինելու ներառական կրթությանը: Զեկույցը դիտարկելու է 2015 թվականին ընդունված Կայուն զարգացման 4-րդ նպատակի առաջընթացը: 4-րդ նպատակը սահմանում է «ներառական և սոցիալական արդարության վրա հիմնված որակյալ կրթության և յուրաքանչյուրի համար ամբողջ կյանքի ընթացքում կրթվելու հնարավորությունների ապահովումը»:

«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազակերպությունը, ներգրավված լինելով ներառական կրթության բերավալման գործընթացներում, «Հանուն որակյալ և հասանելի ներառական կրթության և սոցիալական աջակցության» ծրագրի շրջանակներում իրականացրել է մոնիտորինգ, որի նպատակն է ուսումնասիրել **Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի և Վայոց Ձորի** մարզերում ներառական դպրոցական կրթության առկա վիճակը, հիմնախնդիրները և դրանց հիման վրա ներկայացնել առաջարկություններ:

Սույն ուսումնասիրության մեջ փորձ է արվում վեր հանել ներառական կրթության հիմնական խնդիրները՝ մշտադիտարկելով ինչպես այն մարզերը, որոնք դեռ չեն անցել համընդհանուր ներառական կրթության (Գեղարքունիք, Վայոց ձոր, Կոտայք), այնպես էլ 2018 թվականի աշնանը համընդհանուր ներառական դպրոցական կրթության անցած Արմավիրի մարզը:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

¹ՀՀ կառավարության որոշումը Կառավարության ծրագիրը հաստատելու մասին <https://www.e-gov.am/sessions/>

Մշտադիտարկումն անցկացվել է սոցիոլոգիական որակական մեթոդների կիրառմամբ: Այն իր մեջ ներառել է հետևյալ հիմնական մեթոդների համակցումը՝ դիտարկում, փորձագիտական հարցումներ և ֆոկլոր խմբային քննարկումներ:

Մասնավորապես, 2018թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի և Վայոց Ձորի 12 դպրոցներում իրականացվել է մշտադիտարկում: Յուրաքանչյուր մարզից ընտրվել է ներառական կրթություն իրականացնող 3 դպրոց: Դպրոցի տնօրենի և մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամների հետ անցկացվել են փորձագիտական հարցազրույցներ: Յուրաքանչյուր դպրոցում ներառական կրթության համակարգում ընդգրկված երեխաների ծնողների հետ անցկացվել են ֆոկլոր խմբային քննարկումներ: Դիտարկվել են նաև դպրոցների ֆիզիկական միջավայրը, աշխատանքային ռեսուրսները: Հետազոտական գործիքները կցված են Հավելվածում:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բազմաթիվ խնդիրներ առաջ եկան այն պատճառով, որ ներառական կրթության համակարգի ներդնումը Հայաստանում կապակցվեց պետությունից լրացուցիչ գումար ստանալու ակնկալիքի հետ: Շատ դպրոցներ ընդգրկվեցին ծրագրում լրացուցիչ գումարներ, ռեսուրսներ ստանալու ակնկալիքով: Վերջին տարիներին բացահայտվեցին մի շարք դեպքեր, երբ դպրոցներում արձանագրվել էին չարաշահումներ, յուրացումներ, ներառական կրթության համար հատկացված ռեսուրսներն այլ նպատակներով օգտագործելու դեպքեր: Պետությունից լրացուցիչ գումարներ կորզելու նպատակով երեխաները ընդգրկվել էին ներառական կրթության համակարգում:

Մյուս խնդիրն այն էր, որ բազմամասնագիտական թիմի մուտքը դպրոցներ դիտվեց որպես մրցակցություն ուսուցիչների հետ: Բազմաթիվ ուսուցիչներ տարբեր քննարկումների ժամանակ դժգոհում էին, որ փոխանակ իրենց աշխատավարձն ավելանա, նոր մարդիկ են ընդունվում դպրոց, ովքեր ստանում են իրենց աշխատավարձին հավասար գումար, բայց պարզ չէ, թե որքանով են օգնում երեխաներին: Շատ ուսուցիչները բացասական տրամադրվածության վրա ազդեց նաև այն հանգամանքը, որ ուսուցիչները պետք է մասնակցեին Անհատական ուսումնական պլանների մշակմանը, պետք է նաև լուծումներ գտնեին դասարանում առաջացած նոր իրավիճակների համար՝ առանց այդ ամենի համար լրացուցիչ վճարման:

Խնդիրն էլ ավելի սրվեց, երբ համընդհանուր ներառականության անցման շրջանակներում որոշվեց ներդնել ուսուցչի օգնականի հաստիքը՝ ի հաշիվ հոգեբանամանկավարժական թիմի անդամների նվազման:

Այսպիսով, ներառական կրթության համակարգը Հայաստանում ներդրվեց ոչ թե որպես երեխայի կրթության իրավունքն ապահովող քայլ, այլ որպես մի կողմից պետությունից լրացուցիչ ռեսուրսներ ստանալու հնարավորություն, մյուս կողմից հատկապես ուսուցիչների համար լրացուցիչ դժվարություններ առաջացնող խնդիր:

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՄՆՈՒՆԴ

Մշտադիտարկման ընթացքում կատարված դիտարկումների արդյունքում պարզ դարձավ, որ դպրոցների ֆիզիկական միջավայրը շատ հեռու է ներառական կրթության համար անհրաժեշտ պայմաններից: Միակ բանը, որը գրեթե բոլոր դպրոցներում կա մուտքի թեքահարթակն է: Մնացած առումներով ենթակառուցվածքներ չեն համապատասխանում ներկայացվող պահանջներին: Մարզադալիճների, հանդիսությունների դահլիճների, գուգարանների հասանելիության հարցը մնում է անլուծելի:

Տրանսպորտային ծախսերը չֆինանսավորելու հետ կապված արձանագրվել է դժգոհություն: Դպրոցների տնօրենները, աջակցության թիմի անդամներն առաջարկում են տրանսպորտային գումարները ուղիղ հատկացնել ծնողներին՝ չարաշահումներից խուսափելու համար: Բայց որոշ երեխաների համար տրանսպորտային գումարներ չհատկացնելը կարող է դպրոցից դուրս մնալու պատճառ դառնալ:

Ընդհանրապես պայմանների ապահովումը շատ կարևոր է: Ցանկացած բան կարող է արդյունավետ աշխատել, եթե կան դրա համար անհրաժեշտ պայմաններ: Ներառական կրթությունը կարող է դրական ազդեցություն ունենալ, եթե ստեղծվեն դրա իրականացման համար անհրաժեշտ պայմանները:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Իրավական կարգավորումներ

Հայաստանում մանկավարժական աշխատողների վերապատրաստման գործընթացի պատասխանատուն Կրթության ազգային ինստիտուտն է: Վերապատրաստման լիազորություններ ունի նաև Մանկավարժահոգեբանական աջակցության հանրապետական կենտրոնը: Ներառական կրթության ոլորտում վերապատրաստման աշխատանքներ իրականացվել են հատկապես «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից:

ՀՀ կառավարության 2016 թվականի N 1058-Ն որոշմամբ հաստատվել է Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները: Ըստ այս կանոնադրությունների, հանրապետական և տարածքային կենտրոնները կարող են մշակել և հրատարակել ուսումնական և մեթոդական գրականություն. ստեղծել դիդակտիկ նյութեր և պարագաներ: Հանրապետական կենտրոնը կարող է նաև «պետական ծրագրով չնախատեսված վերապատրաստումներ կազմակերպել և անցկացնել»:

Բացահայտված խնդիրներ

Վերապատրաստումների հարցում համակարգման և որոշակիության կարիք կա: Հետազոտությանը մասնակցած դպրոցների տնօրենները նշել են, որ իրենք վերապատրաստվում են տարբեր կազմակերպությունների, անհատների կամ խմբերի կողմից: Մասնավորապես, վերապատրաստումներ իրականացրել են Կրթության ազգային ինստիտուտի աշխատակիցները, Հույսի կամուրջ կազմակերպության, Վորլդ Վիժըն կազմակերպության, մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների աշխատակիցները: Եղել են նաև վերապատրաստման ծրագրեր, որոնք իրականացվել են առանձին փորձագետների կողմից: Օրինակ՝ աջակցության թիմի անդամներից մեկը նշել է, որ վերապատրաստվել է Հոգեբույժների հայկական ասոցիացիայի փորձագետի կողմից: Մասնավորապես, Արմավիրի մարզի դպրոցների ներկայացուցիչները, որտեղ դպրոցները 2018 թվականի սեպտեմբերի 1-ից անցել են համընդհանուր ներառական կրթության, նշել են, որ վերապատրաստումները բավարար չեն: Դրանք եղել են կարճաժամկետ և առանձնապես չեն հարստացրել իրենց գիտելիքների և հմտությունների բազան: Խնդիրներ կան վերապատրաստումների բովանդակության վերաբերյալ: Վերապատրաստումների մասնակիցները նշում են, որ դրանք հաճախ կենտրոնանում են միջազգային կոնվենցիաների կամ իրավական փաստաթղթերի մասին գիտելիքներ փոխանցելու վրա: Փոխարենը, ուսուցիչները, ուսուցչի օգնականները, աջակցության թիմի անդամները կարիք ունի ուսուցման կոնկրետ ռազմավարությունների, հնարների իմացության: Բացի այդ վերապատրաստումներին մասնակցում են դպրոցի ոչ բոլոր ներկայացուցիչները: Ենթադրվում է, որ վերապատրաստված մասնագետները վերադառնալով դպրոց, պետք է վերապատրաստեն իրենց գործընկերներին: Բայց շատ հաճախ դա տեղի է ունենում ժողովի ժամանակ տեղեկատվություն փոխանցելու միջոցով: Այս հանգամանքը հաճախ բացասաբար է ազդում ներառական կրթության նկատմամբ ուսուցիչների տրամադրվածության վրա: Վերապատրաստումների որակից կա դժգոհություն:

«Նախկին վերապատրաստումների ժամանակ ոչ մի նոր բան չեն սովորեցրել: Գործնական թեմաներով վերապատրաստումների կարիք կա, որ դեպքում ինչպես պետք է վարվել»:

Մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամ

Ակնհայտ է, որ ներառական կրթության համակարգի ներդնումը պահանջում է վերապատրաստումների լրջագույն ծրագիր: Այդ ծրագիրը պետք է լինի համապարփակ, պետք է լինի տևական, քանի որ ներառական կրթության ներդնումը մեծ ջանքեր է պահանջում հաջողություն ապահովելու համար:

Վերապատրաստումների ոլորտում կուտակվել է որոշակի փորձ, միջազգային և հասարակական կազմակերպությունները հրատարակել են ձեռնարկներ, մշակել են մոդուլներ, ուսումնական նյութեր: Այս ամենը համակարգման կարիք ունի:

Որոշ տեղերում մեծ ծավալի աշխատանք են կատարում միջազգային և հասարակական կազմակերպությունները: Օրինակ՝ Գեղարքունիքի ուսուցիչներին աջակցում է Վորլդ Վիժըն, իսկ Արմավիրում՝ Հայաստանի մանուկներ հիմնադրամը:

Օրինակ՝ Գեղարքունիքի դպրոցի աջակցության թիմի անդամները նշել են, որ եթե չլիներ Վորլդ Վիժնը, իրենք վերապատրաստման ոչ մի հնարավորություն չէին ունենա:

Համալիր վերապատրաստումներից զատ անհրաժեշտ են նաև թեմատիկ վերապատրաստումների կարիք կա: Օրինակ՝ մշտադիտարկման ընթացքում աջակցության թիմի անդամները հատկապես նշել են ատուհիզմով երեխաների հետ աշխատելու մոտեցումների, ինչպես նաև լոգոպեդական թեմաներով վերապատրաստումների անհրաժեշտությունը:

Մշտադիտարկման ընթացքում պարզ դարձավ, որ տրաբեր դպրոցներում իրավիճակը տարբեր է: Կան դպրոցներ, որտեղ մասնագետների վերջին 1-2 տարում անցել են վերապատրաստումներ: Բայց Գեղարքունիքի մարզի դպրոցներից մեկի տնօրենը նշել է, որ իր ուսուցիչները վերջին անգամ 2008 թվականին են անցել վերապատրաստումներ: Եվ ունեն մասնագիտական գիտելիքների, հմտությունների թարմացման կարիք:

«Վերապատրաստումները բացակայում են: Անձամ ես վերջին անգամ վերապատրաստումների մասնակցել եմ 2017 թվականին՝ իմ նախաձեռնությամբ»:
Մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամ

Վերապատրաստումների գործընթացում հետադարձ կապի բացակայության խնդիր կա: Թեև մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամները հիմնականում ունեն մասնագիտական կրթություն, բայց պարբերական աջակցության կարիք ունեն:

«Մենք վերապատրաստում անցնում ենք, սակայն հետագայում համոզված չենք, որ ճիշտ մեթոդներ ենք գրում: Գրում ենք, բայց կասկածում ենք, արդյո՞ք, ճիշտ է մեր գրածը»:
Մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամ

Բացահայտված խնդիրներից մեկն էլ այն է, որ չեն օգտագործվում մասնագիտական զարգացման տարբեր մոդելներ: Մասնագիտական զարգացման մոդելներից Հայաստանում հիմնականում օգտագործվում է վերապատրաստումը: Մինչդեռ այս տարիների ընթացքում բազմաթիվ դպրոցներում արձանագրվել են հաջողության փորձեր: Կան դպրոցներ, որոնք ունեն շատ լավ աշխատող աջակցության թիմեր: Կան դպրոցներ, որտեղ կա արդյունավետ համագործակցություն աջակցության թիմի և ուսուցիչների միջև: Կան բազմաթիվ երեխաներ, որոնց կյանքում արձանագրվել է լուրջ առաջընթաց: Այս ամենը պետք է համակարգվի և լավագույն փորձը տարածվի: Ճիշտ կլինի եթե փոխադարձ այցեր լինեն, որոնք ոչ թե լինեն մեկօրյա, այլ առնվազն մեկ շաբաթյա, որպեսզի հնարավոր լինի հաջողության օրինակները ներսից և խորքային հասկանալ:

Վերապատրաստումների համար անհրաժեշտ է ստեղծել նաև թվային գործիքներ՝ օնլայն դասընթացներ, հարց ու պատասխանի հարթակներ:

Շատ կարևոր է ներդնել նաև նորընտիր տնօրենների, փոխտնօրենների, մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստման համակարգ: Մշտադիտարկման ընթացքում պարզ դարձավ, որ բազմաթիվ նորընտիր տնօրեններ տեղյակ չեն ներառական կրթության խնդիրներին և բնականաբար չեն կարող դրանք արդյունավետ կառավարել:

Մշտադիտարկման ընթացքում հիմնականում դրական կարծիքներ են արտահայտվել մանկավարժահոգեբանական աջակցության թիմի մասին: Հատկապես, ծնողները գոհ են մասնագետների աշխատանքից: Սակայն դեռևս բավարար չէ աջակցության թիմի, ուսուցչի օգնականների և ուսուցիչների համագործակցության որակը: Արմավիր մարզում կան նաև անորոշություններ: 2018 թվականի սեպտեմբերին իրականացվել են աջակցության թիմի անդամների կրճատումներ: Այնուհետև մի մասը հետ են կանչվել:

Հատկապես, դրական արձագանքներ կան լոգոպեդիների աշխատանքի հետ կապված: Բայց, մյուս կողմից, հենց այս մասնագետների պակասը կա դպրոցներում: Աջակցության թիմերը նաև հաջողություններ են արձանագրել շփման խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքում: Եղել են առաջարկներ բուժական ֆիզկուլտուրայի մասնագետներ ունենալու հարցում:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ (ԱՈՒՊ) ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

Իրավական կարգավորումները

Ըստ Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի, Աջակցության խումբը դասաժամերի ընթացքում անցկացնում է դիտարկումներ (առնվազն 3 դասաժամ մեկ օրվա ընթացքում), կատարում է ուսումնական նյութերի հարմարեցումներ, մշակում է հաջորդ օրվա դասի պլանների վերաբերյալ առաջարկություններ՝ կապված մանկավարժական մեթոդների և առաջադրանքների հետ, իրականացնում է սովորողի ԱՈՒՊ-ով նախատեսված աջակցության ծառայությունների տրամադրման այլ աշխատանքներ:

Յուրաքանչյուր օրվա ավարտին աջակցության խումբը ԱՈՒՊ-ի համապատասխան բաժիններում գրառում է իրականացված աշխատանքները: Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը առնվազն ամիսը մեկ անգամ հրավիրում է տվյալ սովորողի ուսուցիչների և աջակցության խմբի անդամների ժողով՝ ամփոփելու տվյալ ամսվա ընթացքում սովորողի ԱՈՒՊ-ով նախատեսված աշխատանքների, այդ թվում՝ աջակցող ծառայությունների արդյունքները: Անհրաժեշտության դեպքում ժողովին կարող են հրավիրվել սովորողի ծնողն ու Տարածքային կենտրոնի մասնագետները:

Բացահայտված խնդիրները

Ուսումնասիրության ընթացքում բացահայտվեց, որ ԱՈՒՊ-ի հետ կապված բազմաթիվ խնդիրներ կան: Դպրոցներում ԱՈՒՊ-ը համարում են ձևական գործիք: Այն ընկալվում որպես գրավոր փաստաթուղթ, որը կազմում է թղթավարության մաս: Այն հաճախ չի արտացոլում երեխայի իրական վիճակը և խնդիրները

«ԱՈՒՊ-ի ֆորմալ է: Հաճախ փորձում ենք երեխային հարմարեցնել ԱՈՒՊ-ի պահանջներին»:

Մասնկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամ

«ԱՌԻՊ-ի հետ կապված խնդիրն այն է, որ ավելի շուտ գրում ենք, քան կատարում»:

Աջակցության թիմի անդամ

Դպրոցներն ԱՌԻՊ-ները հիմնականում լրացնում են թղթային տարբերակով: 2 դպրոցում արձանագրվել է էլեկտրոնային լրացման տարբերակ: Ծնողների մասնակցությունը ԱՌԻՊ-ների հաստատմանը համարվում է պարտադիր պահանջ, բայց մշտադիտարկումը ցույց տվեց, որ ծնողները տեղյակ չեն այդ փաստաթղթից կամ տեղյակ են, բայց չունեն բավարար գիտելիքներ, դրանց մասին կարծիք ունենալու համար:

«Ես չեմ հասկանում ինչ է ԱՌԻՊ-ը և վստահում եմ մասնագետների կարծիքին»:

Ճոկուս խմբային քննարկման մասնակից ծնող

Մշտադիտարկման ընթացքում բացահայտվել է հակադրություն ծնողների և մասնագետների կարծիքի միջև: Թեև ուսուցիչները նշել են, որ ծնողներին մասնակից են դարձնում ԱՌԻՊ-ի մշակմանը, բայց ծնողները նշել են, որ իրենք չեն մասնակցում կամ էլ նշել են, որ ինչ-որ փաստաթուղթ են ստորագրել, բայց չգիտեն ինչ է դա: Նախարարությունը, մարզեպատարանը պետք է ունենան մեխանիզմներ այս հարցը լուծելու համար:

Դպրոցներում ԱՌԻՊ-ները կանոնավոր լրացվում են: Սակայն առկա են դեպքեր, երբ ուսուցիչները դժկամությամբ են մասնակցում դրանց լրացմանը:

Մասնագետները կարծիք են հայտնել, որ լսել են ԱՌԻՊ-ի հնարավոր փոփոխության մասին, բայց հստակ տեղյակ չեն արդյոք արդեն փոխվել է, կամ եթե չի փոխվել, ապա երբ է փոխվելու:

Այսպիսով, ԱՌԻՊ-ի հետ կապված արձանագրվել են հետևյալ խնդիրները.

1. ԱՌԻՊ-ները պետք է հնարավորինս պարզեցվեն, որպեսզի ավելի հասկանա լինեն ծնողների համար և քիչ ժամանակ պահանջեն դասավանդող ուսուցիչներից
2. Պետք է ավելի կարևորվեն քննարկումները, ոչ թե թղթեր լրացնելը, որպեսզի ԱՌԻՊ-ի և երեխայի ակտուալ վճիակի միջև անջրպետ չառաջանա:

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Իրավական կարգավորումը

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն (այսուհետ՝ Գնահատում) իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝

1) երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ,

2) ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը,

3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը:

Երեխայի Գնահատման գործընթացն իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում (առաջին, հինգերորդ և տասներորդ դասարաններում), ինչպես նաև՝ երբ երեխայի մոտ, ուսումնառության ընթացքում, արտակարգ իրավիճակներով պայմանավորված՝ նկատվում են կայուն դժվարություններ:

Գնահատումն իրականացվում է երկու փուլով.

- 1) դպրոցական մակարդակի Գնահատում,
- 2) տարածքային մակարդակի Գնահատում:

Վկայագրված երեխայի առաջընթացը կամ հետընթացը գնահատելու համար յուրաքանչյուր տարի իրականացվում է վերագնահատում:

Գնահատումը մասնակցային գործընթաց է, որին մասնակցում են՝ երեխան, նրա ծնողը, աջակցության խումբը, երեխայի ուսուցիչները:

Գնահատումն իրականացվում է երեխայի բնական միջավայրում՝ դպրոցում, մանկապարտեզում, ընտանիքում:

Բացահայտված խնդիրները

Կարիքի գնահատումը համարվում է ներառական կրթության, թերևս ամենախնդրահարույց և բարդ փուլերից մեկը: Հենց այս հարցի հետ են կապված աջակցության թիմերի և ծնողների հիմնական դժգոհությունները:

Մասնավորապես, աջակցության թիմի անդամները և ծնողները նշում են, որ երեխաների գնահատման գործընթացը շատ կարճ է տևում, ինչը հնարավորություն չի տալիս երեխային տեսնել ավելի ամբողջական, տարբեր իրավիճակներում և ճիշտ գնահատել: Արդյունքում, կան մտահոգություններ, որ երեխաների խնդիրները «մեղմ» են գնահատվում, ինչի արդյունքում երեխան չի համարվում կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող, իսկ որոշ երեխաների խնդիրներն էլ թեթև են գնահատվում:

Ծնողները նշում են, որ իրենք լավ չեն պատկերացնում գնահատման գործընթացը և կարիք ունեն ավելի պարզ ու թափանցիկ մոտեցման, որպեսզի հասկանան գործընթացը:

Ծնողները կարող են տարածքային կենտրոնի գնահատման արդյունքները բողոքարկել հանրապետական կենտրոնում: Սակայն այստեղ էլ խնդիր կա, քանի որ այդ դեպքում լրացուցիչ ծախսերի խնդիր է առաջանում Երևանում վերագնահատում իրականացնելու համար:

Առկա են մասնագիտական անհամաձայնություններ տարբեր մակարդակների գնահատողների միջև:

«Մեր տեսած խնդիրները հանրապետական կենտրոնում չէին տեսնում: Մեր կարծիքը հաշվի չէին առնում: Մենք գիտեինք, որ խնդիր կա, բայց իրենք չէին տեսնում: Պետք է դիտարկում արվի դասից դուրս, խաղային տարբերակով/միջավայրում»:

Աջակցության դպրոցական թիմի անդամ

Դպրոց տնօրեններից մեկը նաև բարձրացրել է սահմանված գրաֆիկից երեխաների գնահատումը ուշացնելու խնդիրը:

Այսպիսով, թեև կարիքի գնահատման ուղղությամբ գործադրված շարունակական ջանքերին, դեռևս առկա են անհամաձայնություններ աջակցության դպրոցական թիմի, տարածքային կենտրոնի և ծնողների միջև: Աջակցության դպրոցական թիմերի ներկայացուցիչները պնդում են, որ իրենք ավելի երկարատև են աշխատում երեխաների հետ և ավելի լավ են պատկերացնում նրանց խնդիրները:

ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ԴԱՍԱՊՐՈՑԵՍԸ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Իրավական կարգավորումը

Հայաստանի դպրոցների ուսումնական ծրագրերը դժվար հաղթահարելի են աշակերտների համար: Այս խնդիրն էլ ավելի սուր է դրված ԿԱՊԿՈՒ երեխաների համար: Որքան էլ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունն իրականացվում է ԱՌԻՊ-ով, այն պետք է հմինված լինի պետական չափորոշիչների և ծրագրերի վրա: Սովորողի ԱՌԻՊ-ով նախատեսված արդյունքների ամփոփումն իրականացվում է կիսամյակի ավարտին՝ նկարագրական տեսքով, որը սովորողի առաջադիմության թերթիկի հետ միասին տրամադրվում է ծնողին: Սովորողի կրթական առաջընթացի ընթացիկ գնահատումը կատարվում է ԱՌԻՊ-ով սահմանված նպատակներին և խնդիրներին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, վերանայվում են ԱՌԻՊ-ով սահմանված խնդիրները և գործողությունները, ինչպես նաև աշխատանքների ծավալները:

ԿԳ նախարարի կողմից հաստատվող Սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման կարգում մասնավորապես նշվում է.

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա (ԱՌԻՊ):» «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար գրավոր քննության ժամանակ կարող է տրվել լրացուցիչ 30-ից 40 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:»

Բացահայտված խնդիրներ

Երեխաների առաջադիմության գնահատման հետ կապված կան խնդիրներ: Մասնավորապես, ծնողները նշում են, որ կրթական ծրագրերը երեխայի ընդունակություններին համապատասխան չեն: Շատ բարդ են: Բայց առանձին դեպքերում էլ

կա հակառակ երևույթը: Որոշ երեխաների հնարավորությունները, կարողությունները թերագնահատվում են, ինչի արդյունքում երեխայի մոտ հետընթաց է արձանագրվում:

«Եթե էս ոճով ու ոգով շարունակվի, երեխաները ոչինչ չեն էլ կարողանա սովորել: Երեխայի ընդունակությունները ճիշտ չեն գնահատում»:

Տոկուս խմբային քննարկման մասնակից ծնող

«Այս երեխաների համար հեշտացված ծրագիր է պետք»

Տոկուս խմբային քննարկման մասնակից ծնող

Մեր ուսումնական գործընթացը շարունակում է մնալ որպես ծրագրերի ուսուցում, ոչ թե երեխայի ուսուցում: Մենք պարզապես ծրագիր ենք անցնում, որից օգտվում են միայն այն երեխաները, ում զարգացման անհատական տեմպը համապատասխանում է ծրագրի տեմպին:

«Երեխաների համար գնահատման ընդհանուր, ստանդարտ ինչ-որ պլան են մշակում, որով աշխատում են, բայց բոլոր երեխաների խնդիրները տարբեր են: Նույն ձևով չի կարելի աշխատել բոլոր երեխաների հետ: Չկա անհատական մոտեցում»:

Տոկուս խմբային քննարկման մասնակից ծնող

Առկա է նաև ուսումնական ռեսուրսների պակաս: Մասնավորապես, գնահատման առաջադրանքների, գնահատման մեթոդների: Դրանց բացակայության պարագայում երեխաների առաջադիմության գնահատումը կրում է ձևական բնույթ:

Դպրոցներում դեռևս շատ անելիքներ կան ներառականությունն ապահովելու համար: Կա ընկալում, որ ներառական կրթության պարագայում ոտնահարվում են երեխաների իրավունքներն այն առումով, որ հատուկ դպրոցներից եկած երեխաները չեն ստանում իրենց անհրաժեշտ կրթությունը:

«Կան որոշ ծնողներ, որոնք շատ արհամարհական վերաբերմունք ունեն մեր երեխաների նկատմամբ: Հաճախ ծնողական ժողովների ժամանակ, երբ մենք արտահայտվում ենք, մեզ պատասխանում են. «Ձեր երեխաները ներառական են, դուք կարող եք լուր»:

Տոկուս խմբային քննարկման մասնակից ծնող

Այսպիսով, ներառական կրթության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է առարկայական չափորոշիչները, ծրագրերը, ուսումնական նյութերը շատ ավելի բազմամակարդակ դարձնել, հասարտացնել ուսուցիչների, ուսուցչի օգնականների, աջակցության թիմերի մեթոդական զինանոցը, որպեսզի երեխաների մոտ արձանագրվի առաջընթաց, աճ: Եթե չկա աճ, դրական փոփոխություն, չկա նաև կրթություն: Ներկա ծրագրերը, մոտեցումները դժվարություններ են ստեղծում բոլոր երեխաների համար, ինչից հատկապես տուժում է ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը:

Հատկապես դժգոհություններ կան մեծ դասարաններից, որոնցում ուսուցիչների համար դժվարություն են առաջանում ներառականությունն ապահովելու տեսանկյունից:

«Առարկայական ուսուցիչներն անտեսում են մեր երեխաներին»:

Տոկուս խմբային քննարկման մասնակից ծնող

Պատասխանելով ԿԱՊԿՈՒ երեխաների՝ դասապրոցեսին ընդգրկվածության հարցին, դպրոցի տնօրեններից մեկը նշել է. «աշակերտների 90%-ն անտեսված է»:

Մյուս կողմից, ուսուցիչներն աշակերտներին անտեսում են ոչ թե այն պատճառով, որ նրանց չեն ընդունում, այլ պարզապես չգիտեն ինչպես վարվել: Ուսուցիչներին տրվող գործիքները, հնարները բավարար չեն: Այդ ամենի արդյունքում ուսուցիչների մոտ առաջանում են մասնագիտական վախեր:

«Մեր դպրոցում մի աշակերտ կա, ով դասի ժամանակ լուրջ խնդիրներ է ստեղծում ուսուցիչների և դասընկերների համար: Հաջորդ տարի այդ դասարանում ես էլ եմ դասավանդելու: Մի քանի ամիս դեռ կա, բայց արդեն վախենում եմ այդ դասարան մտնելու մտքից»:

Դպրոցի ուսուցիչ

Հարցման մասնակից ծնողներից մեկի կողմից շատ կարևոր խնդիր է բարձրացվել՝ ԿԱՊԿՈՒ երեխաների մասնագիտական կողմնորոշման հարցը: Հասկանալի է, որ մասնագիտական կողմնորոշման հարցում մեր դպրոցներում իրավիճակը բարվոք չէ: Սակայն ԿԱՊԿՈՒ երեխաների մասնագիտական կողմնորոշման հարցը շատ կարևոր է:

«Մտահոգված եմ հիմնականում մասնագիտական կողմնորոշման հարցով: Հետագայում, անկախ, ինքնուրույն կյանքի համար եմ մտահոգված: Մեր երեխաները կարող են այս դպրոցական ծրագրով այդպես էլ ոչինչ չսովորել: Գոնե մասնագիտական կամ որոշակի հմտություններ սովորեն»:

Ֆոկուս խմբային քննարկման մասնակից ծնող

ԿԱՊԿՈՒ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Թեև զգալի աշխատանք է կատարվել, բայց դեռևս ամբողջացված չէ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի գործարկումը: Մի կողմից Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնն (ԿՏԱԿ) է հավաքագրում տվյալներ, բայց մյուս կողմից, մանկավարժահոգեբանական հանրապետական կենտրոնն է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալների բազա: Կարևոր է, որ այս երկու բազաները համադրվեն և դառնան մեկ միասնական բազա և ընդհանրական տվյալները դառնան հասանելի փորձագիտական հանրության համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշտադիտարկումը ցույց տվեց, որ ներառական կրթության ոլորտում ներկա պահին ավելի շատ հարցեր կան, պատասխաններ:

Ներառական կրթության արդյունավետ ներդրման համար առանցքային նշանակություն ունեն հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս գնահատել երեխաների կրթական կարիքները:
- Ինչպե՞ս կազմակերպել երեխայի աջակցությունը:
- Ինչպե՞ս երեխային ներառել ուսումնական գործընթացում:
- Ինչպե՞ս հաղթահարել ծնողների և ուսուցիչների շրջանում առկա դիմադրությունը:

Մշտադիտարկման ընթացքում բացահայտել ենք ներառական կրթությանն առնչվող հետևյալ խնդիրները.

1. Ծնողների, համայնքի, ուսուցիչների հետ աշխատանքում հիմնական շեշտը դրվում է իրազեկման վրա: Սա կարևոր է, բայց միայն իրազեկման միջոցով անհնար է փոխել մարդկանց մտածելակերպը և գործելակերպը: Պարզապես խոսել ներառական կրթության կարևորության, մարդասիրական մոտեցման մասին բավարար չէ: Արդյունքում, առ այսօր շատերի մոտ առկա է բացասական վերաբերմունք ներառական կրթության վերաբերյալ: Անհրաժեշտ է ուժեղացնել մասնագետների կարողությունները՝ ուսուցման որակյալ մոդուլներ մշակելու միջոցով:
2. Կրթության օպերացիոն համակարգը շարունակում է մնալ սելեկտիվ: Այսինքն՝ համակարգը ուսուցչին դրդում է աշխատել այն աշակերտների հետ, ում սովորելու տեմպերը համապատասխանում են ուսումնական ծրագրի տեմպին: Այն աշակերտները, ում սովորելու տեմպը ավելի դանդաղ է, աստիճանաբար դուրս են մնում սովորելու գործընթացից: Այստեղ ամենաշատը տուժում են Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈԻ) երեխաների հետ: Երեխաներին դասապրոցեսին ներգրավելու գործընթացը դեռևս բարելավման կարիք ունի:
3. Առարկայական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի վերանայման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել դրանք առավել ճկուն դարձնելու անհրաժեշտությունը: Չափորոշիչները պետք է լինեն ավելի ճկուն, իսկ դասագրքերում պետք է լինեն ավելի բազմազան առաջադրանքներ: Ներկայումս փորձ է արվում երեխաներին հարմարեցնել ուսումնական ծրագրին, բայց դա ոչ միշտ է ստացվում: Մինչդեռ ծրագրերը պետք է հարմարվեն երեխաներին:
4. Անհատական ուսումնական պլանը (ԱՈԻՊ) որպես ուսումնական գործիք դեռևս արդյունավետ չի գործում: Այն դիտարկվում է որպես բյուրոկրատական գործիք, որը

պետք է լրացնել որպես պահանջ: Այն դեռևս չի դարձել ուսուցչին, ուսուցչի օգնականին, աջակցության թիմին և ծնողներին համախմբող գործիք:

5. Անցումը համընդհանուր ներառականության պահանջում է շատ ավելի լուրջ նախապատրաստական աշխատանքներ: Վերապատրաստումները կարիք ունեն համակարգման, վերանայման և բազմազանացման: Կան հաջողված փորձեր, որոնք պետք է օգտագործել հաջողությունները անհատական մակարդակից համակարգային դարձնելու համար:
6. Դպրոցների ֆիզիկական միջավայրը շարունակում է մնալ մտահոգիչ: Դպրոցների զգալի մասում կան միայն թեքահարթակներ: Իսկ մնացած առումներով ֆիզիկական միջավայրը չի համապատասխանում ներառական կրթության չափանիշներին:
7. Անհրաժեշտ է անցկացնել համընդհանուր ներառականության անցման ֆինանսական հաշվարկ, որը հնարավորություն կտա հասկանալ, թե որքան ներդրումներ են անհրաժեշտ համակարգը լիարժեք կիրառելու համար: Առանց պատշաճ ֆինանսավորման՝ ներառյալ աշխատավարձերի բարձրացում, հնարավոր չէ համընդհանուր ներառականության լիարժեք ներդրում: Ակնհայտ է, որ ներառական կրթությունն առանց բավարար ֆինանսական ներդրումների չի կարող տալ ցանկալի արդյունք: Ուսուցիչների և մանկավարժական աշխատողների առջև դրվում է լուրջ խնդիր, որը լուծելու համար ռեսուրսներ են անհրաժեշտ:
8. Դասապրոցեսից դուրս լրացուցիչ աջակցության մեխանիզմները բավարար չեն: Հատկապես գյուղական վայրերում ապրող երեխաները լրացուցիչ աջակցության կարիք ունեն՝ դպրոցից դուրս մնալու, անձնական աճ չունենալու ռիսկերը կանխելու համար: Հատկապես մեծ կարիք կա լոգոպեդների և աուտիզմ ունեցող երեխաների հետ աշխատելու հմտությունների: Որոշ դպրոցներ բարձրացնում են նաև բուժական ֆիզկուլտուրայի մասնագետ ունենալու կարիքը:
9. Ներառական կրթության դրական կողմերից մեկն այն է, որ դպրոցում ստեղծում է որոնումների, խնդիրներ լուծելու մթնոլորտ: Դպրոցի աշխատակազմը փորձում է ելքեր գտնել, լուծումներ առաջարկել, ինչը դրական է ազդում դպրոցի մթնոլորտի վրա:
10. Դեռևս հասանելի չէ ԿԱՊԿՈՒ երեխաների մասին տեղեկատվական ընդհանրական բազան:

Համընդհանուր ներառականության անցման հիմնական խնդիրը պետք է լինի կրթության օպերացիոն համակարգն առավել ներառական դարձնելը: Ներառականությունը չպետք է սահմանափակվի միայն ֆիզիկական ինտեգրումով: Երեխաների ուսուցման վայրի փոփոխությունը բավարար չէ ներառականությունն ապահովելու համար: Իրական ներառականությունն ապահովելու համար անհրաժեշտ է դպրոցներում ապահովել երեխաների սոցիալ-էմոցիոնալ ներգրավվածություն, սովորելու հնարավորությունների բազմապատկում:

1. Օգտագործելով միջազգային լավագույն փորձը ձևավորել վերապատրաստողների թիմ, հրատարակել բարձրորակ ձեռնարկներ տնօրենների, փոխտնօրենների, աջակցության թիմի անդամների, ուսուցիչների, ուսուցչի օգնականների, ծնողների համար:
2. Ստեղծել վերապատրաստումների մի քանի թեմատիկ մոդուլներ՝ ներառելով ինչպես դասավանդման մոտեցումներ, այնպես էլ տարբեր կարիքներով երեխաներին աջակցելու արդյունավետ մոտեցումներ:
3. Նորընտիր տնօրենների, փոխտնօրենների համար նախատեսել պարտադիր դասընթացներ ներառական կրթության վերաբերյալ:
4. Ստեղծել հաջողված փորձի քարտեզ: Հաջողված դպրոցների փորձը տարածել վերապատրաստումների, փոխադարձ այցերի, խորհրդատվության միջոցով:
5. Մանկավարժական համալսարաններում ներառական կրթությունը դասավանդել ոչ միայն որպես առանձին առարկա կամ թեմա, այլև դիտարկել որպես դասավանդվող բոլոր առարկաների մաս՝ շեշտը դնելով ներառականությունն ապահովող մեթոդների ուսուցման վրա:
6. Կատարել ներառական կրթության իրականացման ֆինանսական հաշվարկ՝ հասկանալու համար, թե որքան է անհրաժեշտ պայմաններ ապահովելու և արդյունավետ ծառայություններ մատուցելու համար: Ապահովել տրանսպորտի անհրաժեշտությունն ունեցող երեխաների ծախսերը՝ գումարը ծնողներին փոխանցելու միջոցով:
7. Ստեղծել ԿԱՊԿՈՒ երեխաների միասնական տվյալների բազա ստեղծել և ընդհանրական տվյալները հասանելի դարձնել հետազոտողների համար:

8. Շարունակաբար բարելավել երեխայի կարիքների գնահատման համակարգը՝ այն դարձնելով ավելի թափանցիկ: Հաշվի առնել երեխայի հետ երկարաժամկետ աշխատող մասնագետների տեսակետները:
9. ԱՌԻՊ-ի բարելավման շուրջ անցկացնել պարբերական քննարկումներ և ուսուցանել ու տարածել առկա լավագույն փորձը:
10. Բազմազանացնել առարկայական չափորոշիչների վրա կազմվող դասագրքերի նյութերը, գնահատման առաջադրանքները՝ առավել ներառականություն ապահովելու համար: Հստակեցնել առաջադիմության գնահատման չափանիշները՝ դրանք դարձնելով ավելի ճկուն:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Դպրոցի տնօրենի հետ խորացված հարցազրույցի հարցաշար

Հարգելի՛ ---յան.

Ես՝ /անուն ազգանուն/, ներկայացնում եմ «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Ներառական կրթության արդյունավետությունը բարելավելու նպատակով մեր կազմակերպության կողմից անց է կացվում ուսումնասիրություն Արմավիրի դպրոցներում: Սույն հարցման նպատակն է պարզել ներառական կրթության առկա իրավիճակը, ձեռքբերումներն ու խնդիրները: Շնորհակալություն Ձեր մասնակցության համար:

Մարզ-----

Քաղաք-----

Դպրոց N----- (ավագ, հիմնական/ընդգծել)

1. Ինչպե՞ս եք, ընդհանուր առմամբ, գնահատում ներառական կրթության կայացվածությունը հանրակրթական դպրոցներում: Կո՞ղմ եք ներառական կրթության այս մոդելին:

2. Խնդրում եմ ասեք, ձեր դպրոցում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը (նշել ըստ կրթական աստիճանների):

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈւ) երեխաները հետևյալ ո՞ր ֆունկցիայի խանգարումներն ունեն:

Ֆունկցիայի խանգարման տեսակ	Աշակերտների թիվը
1) խոսքի խանգարում	
2) լսողության խանգարում	
3) տեսողության խանգարում	
4) մտավոր հետամնացություն ունեցող	
5) հենաշարժական համակարգի խախտումներ	
6) հոգեբանական զարգացման խնդիրներ	
7) վարքային և հուզականային ոլորտի խանգարումներ	

4. Քանի՞ մասնագետ է ընդգրկված բազմամասնագիտական թիմում (հոգեբանամանկավարժական աջակցության խմբում):

--

5. Ի՞նչ մասնագետներ են:

--

6. Արդյո՞ք բավարար եք գնահատում մասնագետների թիվը:

--

7. Արդյո՞ք լրացուցիչ մասնագետի կարիք զգացվում է:

--

8. Ինչպե՞ս եք գնահատում հոգեբանամանկավարժական աջակցության խմբի մասնագիտական գիտելիքները և կարողությունները: Ինչպե՞ս կարելի է դրանք բարելավել:

9. Ինչպե՞ս եք գնահատում ԿԱՊԿՈւ երեխաների ընդգրկվածությունը և համարժեք մասնակցությունը դասապրոցեսին:

10. Ի՞նչ խնդիրների են բխվում ուսուցիչները ԿԱՊԿՈւ երեխաների հետ աշխատանքում: Թվարկեք 3 կարևորագույնները:

11. Ի՞նչ խնդիրներ եք ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների և ծնողների՝ ԿԱՊԿՈւ երեխաների հետ համատեղ սովորելու վերաբերմունքի հետ կապված:

12. Ի՞նչ կարծիքի եք Անհատական ուսումնական պլանի բովանդակության և ձևաչափի մասին:

13. Օրենսդրական, նորմատիվային ինչպիսի՞ խնդիրներ եք տեսնում ներառական կրթության իրականացման գործընթացում:

14. Ծնողների հետ աշխատանքի ի՞նչ մեթոդներ եք կիրառում:

15. Ի՞նչ խնդիրներ եք տեսնում երեխաների կրթական կարիքների գնահատման գործընթացում: Ի՞նչ առաջարկներ ունեք:

16. Բավարար համարում եք պետության կողմից հատկացվող ֆինանսավորման չափը յուրաքանչյուր ԿԱՊԿՈւ սովորողի կրթության կազմակերպման համար: Որքա՞ն է այն կազմում:

17. Արդյո՞ք Ձեր դպրոցն իրականացնում է տնային ուսուցում: Եթե այո, ապա, ի՞նչ մեխանիզմով է այն իրականացվում և քանի՞ երեխայի համար: Եթե ոչ, ապա ինչու՞ :

18. Ըստ Ձեզ, որո՞նք են ներառական կրթության ներդրման խոչընդոտները:

19. Ինչո՞ւ է ձեր դպրոցը դարձել ներառական կրթություն իրականացնող դպրոց: Ո՞րն է մոտիվացիան:

20. Ի՞նչ առաջարկներ ունեք ներառական կրթության արդյունավետությունը բարելավելու համար:

Ֆոկուս խմբային քննարկում ծնողների հետ

Հարգելի՛ ծնողներ.

Ես՝ /անուն ազգանուն/, ներկայացնում եմ «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Ներառական կրթության արդյունավետությունը բարելավելու նպատակով մեր կազմակերպության կողմից անց է կացվում ուսումնասիրություն Արմավիրի դպրոցներում: Սույն խմբային քննարկման նպատակն է պարզել կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող աշակերտների ծնողների բավարարվածությունը կրթության պայմաններով: Հետազոտության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է Ձեր պատասխանների անկեղծությամբ: Տեղեկացնում ենք, որ այստեղ հնչած կարծիքների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը բացառապես օգտագործվելու է անհրաժեշտ վերլուծություններ կատարելու համար: Շնորհակալություն Ձեր մասնակցության համար:

Մարզ-----

Քաղաք-----

Դպրոց N----- (ավագ, հիմնական/ընդգծել)

1. Ինչպե՞ս եք, ընդհանուր առմամբ, գնահատում ներառական կրթության կազմակերպումն այս դպրոցում: Կո՞ղմ եք ներառական կրթության այս մոդելին:

2. Արդյո՞ք մասնակցում եք Անհատական ուսումնական պլանի (ԱՈւՊ) մշակմանը: Եթե մասնակցում եք, ապա ինչպե՞ս:

3. Ձեզ համար ընդունելի է արդյո՞ք ԱՈւՊ-ը կազմող մասնագետների կողմից տրված ձեր երեխաների բնութագիրը: Եթե ոչ, նշե՞ք ձեր առարկությունները:

4. Համաձայն էք արդյո՞ք բազմամասնագիտական խմբի կողմից ըստ ուսումնական առարկաների սահմանած նպատակների, գործողությունների, դրանց իրականացման ժամկետների և արդյունքների հետ: Եթե ոչ, նշեք ձեր առարկությունները:

5. Ի՞նչ կարծիքի էք ձեր երեխաների հետ աշխատող բազմամասնագիտական խմբի անդամների մասին: Ի՞նչ մասնագետներ են աշխատում ձեր երեխաների հետ: Ի՞նչ ձեռքբերումներ կան, ինչպե՞ս կարելի է ավելի բարելավել նրանց աշխատանքը:

6. Բազմամասնագիտական թիմի աշխատանքի արդյունքում նկատելի է արդյո՞ք կրթական և հոգեբանական առաջընթաց ձեր երեխաների մոտ:

7. Ի՞նչ կարծիք ունեք ձեր երեխաների սոցիալական, կրթական կարիքների գնահատման վերաբերյալ: Արդյո՞ք ունեք անհամաձայնություններ երեխայի կարիքների գնահատման հարցում:

8. Ինչպե՞ս կգնահատեք կրթական ծրագրերի հարմարեցվածությունը ձեր երեխաների առանձնահատկություններին:

9. Ինչպե՞ս կգնահատեք ուսուցիչների հետ համագործակցությունը ձեր երեխաների կրթական կարիքները բավարարելու տեսանկյունից:

10. Ինչպե՞ս եք գնահատում ԿԱՊԿ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք) չունեցող երեխաների և նրանց ծնողների վերաբերմունքը ձեր երեխաներին:

11. Որքան՞ով է դպրոցի ֆիզիկական միջավայրը հարմարեցված ձեր երեխաների կարիքներին (դասասենյակ, զուգարան, մարզադահլիճ, բուֆետ, համակարգչային սենյակ, դպրոցի բակ, մարզահրապարակ):

12. Որքան՞ով եք գոհ ձեր երեխաների համար նախատեսված սննդի մատուցման և տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կազմակերպումից:

13. Դպրոցից դուրս ի՞նչ ծառայություններ են ստանում ձեր երեխաները:

14. Ի՞նչ մտահոգություններ ունեք ձեր երեխաների կրթության հետ կապված:

15. Ի՞նչ առաջարկություններ ունեք Ձեր երեխաներին մատուցվող կրթական ծառայությունները բարելավելու առումով:

Դպրոցի բազմամասնագիտական խմբի մասնագետի հետ հարցազրույցի հարցաշար
Հարգելի՛ ---յան.

Ես՝ /անուն ազգանուն/, ներկայացնում եմ «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Ներառական կրթության արդյունավետությունը բարելավելու նպատակով մեր կազմակերպության կողմից անց է կացվում ուսումնասիրություն Արմավիրի դպրոցներում: Սույն հարցման նպատակն է պարզել ներառական կրթության առկա իրավիճակը, ձեռքբերումներն ու խնդիրները: Շնորհակալություն Ձեր մասնակցության համար:

Մարզ-----

Քաղաք-----

Դպրոց N----- (ավագ, հիմնական/ընդգծել)

1. Քանի՞ մասնագետից է բաղկացած ձեր բազմամասնագիտական խումբը: Ի՞նչ մասնագետներ են ընդգրկված խմբում:

2. Դուք կրթությամբ ի՞նչ մասնագետ եք և արդյո՞ք խմբում ընդգրկված եք հենց այդ մասնագիտությամբ:

3. Խմբի մյուս մասնագետները համապատասխանո՞ւմ են իրենց ստացած կրթությանը:

այո

հիմնականում այո

ոչ

տեղյակ չեմ

4. Ինչպե՞ս եք կազմում երեխայի Անհատական ուսումնական պլանը (ԱՈւՊ). խմբով, մենակ դուք, ամեն մասնագետ իր մասով, ի՞նչ ժամանակահատվածում:

5. Մասնակցու՞մ է արդյոք ԿԱՊԿՈւ երեխայի ծնողը ԱՈւՊ-ի մշակմանը:

այո

երբեմն

ոչ

6. Ինչպե՞ս եք ներառում ԿԱՊԿՈւ երեխայի ծնողին զարգացման առաջնային և երկրորդային խնդիրների շարադրմանը ԱՈւՊ-ում:

7. Ի՞նչ ֆորմատով եք պատրաստվում ԱՈւՊ-ները:

Թղթային էլեկտրոնային 2-ն էլ

8. Ի՞նչ կարծիքի եք ԱՈւՊ-ի բովանդակության և ձևաչափի մասին: Ի՞նչ խոչընդոտներ եք ունենում: Ի՞նչ առաջարկներ ունեք:

9. Համագործակցու՞մ եք արդյոք առարկայական ուսուցիչների հետ: Ինչպե՞ս:

10. Ի՞նչ կարծիք ունեք ԿԱՊԿՈւ երեխաների սոցիալական, կրթական կարիքների գնահատման վերաբերյալ: Արդյո՞ք բավարար է գնահատման այս տարբերակը: Ի՞նչ առաջարկներ ունեք:

11. Մասնակից դարձնու՞մ եք արդյոք ԿԱՊԿՈւ երեխայի ծնողին երեխայի զարգացման խնդրից/ներից/ բխող ուսուցման համար անհրաժեշտ առանձնահատուկ գործողությունների պլանավորմանը և իրականացմանը /դպրոցում, տանը/: Ինչպե՞ս:

12. Անցնում եք արդյո՞ք պարբերաբար վերապատրաստումներ: Վերջին անգամ ե՞րբ եք անցել, ի՞նչ թեմայով, ու՞մ կողմից:

13. Կցանկանա՞ք արդյոք անցնել նոր վերապատրաստումներ: Եթե այո, ապա ի՞նչ թեմաներով:

14. Համարո՞ւմ եք արդյունավետ ներառական կրթության կազմակերպումը ձեր դպրոցում: Ի՞նչ խոչընդոտների եք բխվում:

15. Ի՞նչ առաջարկներ ունեք ներառական կրթության արդյունավետությունը բարելավելու համար:

Դիտարկման թերթիկ

1. Դպրոցի ֆիզիկական միջավայրի հարմարեցվածությունը.
 - 1.1 Դպրոցի մուտքի մոտ կա՞ թեքահարթակ:
 այո ոչ
 - 1.2 Թեքահարթակի կողքով կա՞ բազրիք:
 այո ոչ
 - 1.3 Դպրոցի ներսում, հարկերի միջև կա՞ թեքահարթակ:
 այո ոչ
 - 1.4 Դպրոցի զուգարանը/ները հարմարեցվա՞ծ են (դուռը՝ լայն, դռան շեմը՝ հարթ, ներսում՝ զուգարանակոնքի կողքին՝ բռնելու ձող):
 այո մասամբ ոչ

2. Արդյո՞ք դպրոցին փոխանցված է երեխայի մասին տեղեկատվությունը նախորդ հատուկ կամ հանրակրթական դպրոցից:

այո մասամբ ոչ

3. Ի՞նչ ֆորմատով են պատրաստվում ԱՌՊ-ները:

Թղթային էլեկտրոնային 2-ն էլ

4. Արդյո՞ք ԱՌՊ-ները ստորագրված են ծնողների կողմից:

այո մասամբ ոչ

5. Արդյո՞ք կան ներառական կրթության մասին նյութեր:

պաստառներ,

ուսուցողական նյութեր,

ուղեցույցներ,

այլ-----

6. Արդյո՞ք բազմամասնագիտական խումբն ունի անհրաժեշտ դիդակտիկ պարագաներ և նյութեր:

այո սակավ ոչ

7. Հատուկ մանկավարժների, ուսուցիչների և ծնողների համագործակցությունը հավաստող ի՞նչ վկայություններ կան (համաձայնագիր, առաջարկությունների արկղ, կարծիքների մատյան, սմայլիներով գնահատման հարցաթերթ, ԿԱՊԿՈւ ծնողների ավելի հետ ավելի հաճախ հանդիպումների գրաֆիկ և այլն):

--

8. ԿԱՊԿՈւ երեխաների՝ դասարանում ներգրավվածության և ընդհանուր կրթական գործընթացին մասնակցության ի՞նչ վկայություններ կան:

--